

ՍՈՒՐԲ ԽԱԶ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross
Armenian Church

Գեր. Տէր

19 Յունիս 1980

Թորգոմ Ս. Արք. Մանուկեան

Առաջնորդ Եւ

Նախագահ Թեմական Խորհուրդի

Նիւ Եօրք

Սրբազան Հայր,

78րդ պատգամաւորական ժողովին, Թեմական Խորհուրդի Ատենապետ Դատաւոր ծան Նամարեան, Գանատական թեմի կազմութեան կապակցութեամբ, Առաջնորդարանի կողմէ Վեհափառ Հայրապետին ղրկուած Թղթածրարի մասին որոշ բացատրութիւն մը տուած է, որուն համար շնորհակալութիւն կը յայտնենք:

Մեր պատգամաւորները, յուսալով թէ՝ Թեմական Խորհուրդը, պատգամաւորներուն մեծամասնութիւնը մօտէն չշահաքրքրող այս հարցով, ժողովը ալ աւելի զբաղ չպահելու մտահոգութեամբ մանրամասնութիւններու մանելէ կը խուսափի, յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար ինդրանք չեն ներկայացուցած:

Նկատի ունենալով թէ՝

Ստացուած բացատրութիւնները գոհացուցիչ ըլլալէ շատ հեռու էր,

Թղթածրարը Ս. Էջմիածին ղրկուելէ առաջ պարունակութիւնը կարգ մը անձերու տեղեկացուած եւ անոնց հետ խորհրդակցուած էր.


Կարգ մը աղբիւրներէ ստացուած լուրերու համաձայն, թեմի հաստատումը երեք տարիով յետաձգել թելադրուած էր -ինչ որ Դատաւոր ծան Նամարեանի կողմէ չէր ըսուած-

Մտքերու մէջ որեւէ շփոթութեան տեղի չտալու մտահոգութեամբ, Զերդ
Սրբութենէն եւ Թեմական Խորհուրդէն յատկապէս կը ինդրենք, որ բարեհաճիր
մեզի աւելի յստակ մանրամասնութիւններ հաղորդել:

Մատչիմբ ի Համբոյր
Զերդ Սրբազնութեան Աջին
ի Դիմաց
ծխական Խորհուրդի

Հայոց Ձեռամբական:

Տօրթ. Վաչէ Քէրամէթլիեան
Ատենադպիր



Արմէն Քիւրքնեան
Ատենապետ